ՈՒՂԵՑՈՒՅՑ
ՀԱՄԱՁԱՅՆԵՑՎԱԾ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐՈՎ ՊԱՏԱՀԱՐՆԵՐԻ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ԳՐԱՆՑՄԱՆ ԴԵՊՔԵՐՈՒՄ ԿՈՂՄԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Մինչև 100.000 ՀՀ դրամ գույքային պահանջներով պատահարների պարզեցված գրանցում

ՈՒշադրություն՝ այս գործընթացն իրականացվում է առանց ապահովագրական ընկերության և ոստիկանության ներկայացուցչի համաձայնության և (կամ) ներկայության:

Գործընթացին բավարարող պայմանները

1. Տեղի է ունեցել ճանապարհատրանսպորտային պատահար (ՃՏՊ),
2. ՃՏՊ-ում ներգրավված են միայն երկու ավտոտրանսպորտային միջոց (ՏՄ), որոնցից առնվազն մեկն ունի գործող ԱՊՊԱ պայմանագրեր,
3. ՃՏՊ-ի արդյունքում վնաս է պատճառվել միայն այդ ՏՄ-ներին,
4. վնաս պատճառած անձն ընդունում է, որ ՃՏՊ-ի առաջացման մեջ միակ մեղավորն ինքն է և առկա է փոխադարձ համաձայնություն դրա վերաբերյալ,
5. տուժողի կողմից վնաս պատճառողից ակնկալվող վնասի հատուցման չափը չի գերազանցում 100.000 ՀՀ դրամը:

Վարորդների գործողությունները

1. Որևէ կերպ՝ այդ թվում ցանկացած հեռախոսի միջոցով առնվազն երեք անգամ լուսանկարահանվում է ՃՏՊ-ում ներգրավված ՏՄ-ները: Ընդ որում, լուսանկարահանումը (տեսանկարահանումը) պետք է կատարվի այնպես, որպեսզի լուսանկարներն (տեսանյութն) առնվազն արտացոլեն երկու ՏՄ-ների հետվթարային փոխադարձ դիրքերը և ՃՏՊ-ի հետևանքով դրանցից յուրաքանչյուրի ընդհանրական վնասվածքները,
2. Լրացվում է համաձայնեցված հայտարարագիրը և ՃՏՊ-ին մասնակից վարորդները ստորագրում են այն,
3. Վարորդներն ազատում են ճանապարհի երթևեկելի մասը,
4. Վնաս պատճառած վարորդը ՃՏՊ-ի մասին իր կողմից վարած ավտոմեքենայի ԱՊՊԱ Վկայագրի վրա նշված հեռախոսահամարով տեղեկացնում է Ապահովագրողին տեղի ունեցած ՃՏՊ-ի մասին՝ հարցադրումներին պատասխանելով առավելագույնը համաձայնեցված հայտարարագրում լրացված տեղեկատվությունը (**ուշադրություն՝** ապահովագրական ընկերությունն իրավունք չունի համաձայնեցված հայտարարագրում լրացված տեղեկատվությունից ավել տեղեկատվություն հարցնել ձեզանից),
5. Ապահովագրական ընկերությանը տեղեկացնելուց հետո վարորդները իրենց ՏՄ-ներով հեռանում են վթարի վայրից (**ուշադրություն՝** ապահովագրական ընկերությանը դեպքի վայրում սպասելու պարտավորություն վարորդները չունեն):

Ապահովագրական հատուցում ստանալու կարգն ու ժամկետները

1. ՃՏՊ-ի տեղի ունենալուց հետո **5 աշխատանքային օրվա ընթացքում** տուժողը պարտավոր է ստորագրված համաձայնեցված հայտարարագիրը և հատուցում ստանալու համար դիմումը (դիմումը հնարավոր է ներկայացնել նաև ՃՏՊ-ը տեղի ունենալուց հետո եռամսյա ժամկետում) ներկայացնել վնաս պատճառած ՏՄ վերաբերյալ ԱՊՊԱ պայմանագիր կնքած ապահովագրական ընկերությանը՝ վերջինիս հնարավորություն տալով՝
   - ✓ *ծանոթանալ կամ որևէ կերպով ստանալ կատարված լուսանկարների կամ տեսանյութի էլեկտրոնային տարբերակներին,*
   - ✓ *զննել վթարված ՏՄ-ն:*
2. Ապահովագրական ընկերությունը հատուցում ստանալու դիմումը ստանալուց հետո **3 աշխատանքային օրվա** ընթացքում ապահովում է վնասի փորձաքննության իրականացումը և արդյունքների մասին ծանուցումը Տուժողին և Ապահովադրին,
3. Ծանուցման պահից սկսած **5 աշխատանքային օրվա օրվա ընթացքում վնասի** լրացուցիչ և (կամ) կրկնակի փորձաքննության նշանակման պահանջի բացակայության կամ այդ ընթացքում փորձաքննության արդյունքների համաձայնության պահից հետո **1 աշխատանքային օրվա ընթացքում** ապահովագրական ընկերությունն ընդունում է հատուցումը վճարելու կամ հատուցման վճարումը մերժելու մասին որոշում, որի մասին **1 աշխատանքային օրվա ընթացքում** ծանուցում է տուժողին,
4. Հատուցման որոշման հետ համաձայնության առկայության և հատուցման եղանակը գումարի ստացմամբ ընտրելու դեպքում ապահովագրական ընկերությունը **1 աշխատանքային օրվա ընթացքում** հատուցման գումարը վճարում է տուժողին կամ տուժողի կողմից հատուցման եղանակը վերանորոգում ընտրելու դեպքում՝ ապահովում է ՏՄ-ի վերանորոգումը: